



ԳՆ ԱՃԱՅԱՆ ՔԻ ԽՈՍՍՔԵ Ր

ԳԱՐԵ ԳԻՆ Ր ՃԱՅՐԱՊԵՇ ՏԻ

ԸՆ ՏՐՈՒԻԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ՇԱՆԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆ

Երևանի պեպրական համալսարանի

Աստվածաբանական ֆակուլտետի դեկան

«ԵՐԳԵՑԷՔ ՏԵԱՌՆ ԵՐԳ ՆՈՐ»

Ամեն տարեվերջի Եկեղեցին կը տօնէ Դաւիթ Մարգարէի եւ Յակոբոս Տեառնեղբօր յիշատակը, որ տօնն է Երուսաղէմի Պատրիարքական Աթոռի հաստատութեան, երբ Յակոբոս ընտրուեցաւ Առաքեալներուն կողմէ իբրեւ առաջին եպիսկոպոսը Քրիստոնեայ աշխարհին: Այս առիթով երգուած շարականը կը սկսի օրհնութեան երգով մը, որ փառք կուտայ Աստուծոյ, քանզի ծագեաց մեզ լոյս փրկութեան ի տանէ Դաւթի:

Ամեն կաթողիկոսական ընտրութիւն, կը յիշեցնէ Առաքեալներուն ուրախութիւնը, որ Տիրոջ համբարձումէն ետք, տեսան Տեառնեղբօր մէջ ճառագայթումը իրենց Տիրոջ փրկութեան լոյսին:

Կաթողիկոսական ընտրութեան համար հաւաքուած Ազգային-Եկեղեցական պատգամաւորական ժողովը ապրեցաւ Առաքեալները յիշեցնող խանդավառ ուրախութիւն մը, երբ համրուեցան քուէները եւ յայտարարուեցաւ արդիւնքը: Աշխարհի չորս ծագերէն եկած եւ Միածնաէջ Մայր Տաճարին ներսը հաւաքուած եպիսկոպոսական դասը, քահանաներ եւ մեր Եկեղեցւոյ ժողովուրդը ներկայացնող պատգամաւորները, յոտնկայս ողջունեցին նորընտիր Կաթողիկոսը: Վերցուեցաւ սեւ շղարշը Կաթողիկոսական գահէն եւ կարծես նոր լոյս ծագեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աթոռէն:

Քրիստոնեայ աշխարհի բոլոր հին Եկեղեցիներուն մէջ միակն է Հայաստանեայց Եկեղեցին, որուն հովուապետը կ'ընտրուի ազգային և եկեղեցական համագումար ժողովի մը կողմէ: Ազգային է ժողովը, որովհետեւ ընտրուած է ժողովուրդէն, հա՛յ ժողովուրդէն, ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի: Ազգային է ան, որովհետեւ հաւաքուած պատգամաւորները եկան բոլոր այն երկիրներէն, ուր կ'ապրին հայ համայնքներ, իրենց կառուցած Եկեղեցիի շուքին տակ: Ազգային եւ եկեղեցական է ան, որովհետեւ կը կայանայ հայրենի հողին վրայ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի եւ Տրդատ թագաւորի կառուցած Մայր Տաճարէն ներս, Իջման Ս. Սեղանին շուրջ եւ կ'ընտրէ Հայ Եկեղեցիի Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Իրենց Կաթողիկոսը ընտրելու աւանդութիւնը, որու համաձայն ընտրուեցաւ Գարեգին Բ. Հայոց Հայրապետը, իւրայատուկ է մեր Եկեղեցիին: Կարդացուեցաւ Հայ Եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսներուն ցանկը, իբրեւ թեկնածուներու ցանկ, որմէ Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամաւորները ընտրեցին եպիսկոպոսապետը: Աշխարհատարած հայութիւնը խօսեցաւ իր

դրկած պատգամաւորներու բերանով, այն հաւատքով եւ ջերմեռանդութեամբ, որ ընտրութեամբ ազգիս արտայայտուեցաւ Աստուծոյ կամքը:

Մեր ժողովուրդի այսօրուան կեանքի պայմաններուն մէջ գոյութիւն չունի ազգային այլ երեւոյթ, որ արտայայտէ մեր հայ ժողովուրդի միութիւնը եւ խորհրդանշէ Հայ Եկեղեցւոյ մէկութիւնը: Միութիւնն ու մէկութիւնը զիրար գրկեցին Ս. Խորանին առջեւ, երբ Ս. Սեղան բարձրացան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքները եւ տասներկու Արքեպիսկոպոսներ, երկարեցին իրենց աջերը նորընտիր Կաթողիկոսի գագաթին եւ օծեցին զայն Սրբալոյս Միւռնով: Խորհրդանշական այն պահուն, այսօրուան ամբողջ հայութիւնը կապուեցաւ իր անցեալին եւ իր պատմութեան խորհուրդին: Ս. Միւռնի օծումով, Ս. Հոգին դարձեալ իջաւ, ինչպէս իջած էր Տրդատ թագաւորի գագաթին, երբ Ս. Գրիգոր կնքեց անոր ճակատը: Աստուծոյ Հոգին նմանապէս իջաւ Ամենայն Հայոց Տ. Տ. Գարեգին Բ. Հայրապետի գագաթին, լուսաւորելու համար անոր ծառայութեան ճանապարհը: Ինչպէս Քրիստոս ըսած էր իր առաքեալներուն, օծումի պահը կը հնչեցնէ իւրաքանչիւր ձեռնադրուող եւ օծեալ եկեղեցականի ունկին Քրիստոսի կոչը. «Առ զխաչ քո եւ եկ զկնի իմ»:

Հայ Եկեղեցին լսած է միշտ Քրիստոսի կոչը եւ երբեք չէ՝ դադրած կրելէ իր խաչը, զոհողութիւններու եւ նահատակութիւններու երկար իր ճանապարհին: Մեր պատմութեան տխուր եւ ուրախ օրերուն, անոր կեանքը եղած է ծառայական: Ան ծառայած է հայ գիրի եւ գրականութեան ծաղկումին եւ, ազգային իր վարժարաններով, ան կը ներշնչէ գաղթօճախներու մէջ տարուող ազգապահպանման սրբազան գործը:

Կաթողիկոսի ձեռնադրութեան եւ օծումի արարողութեան ժամանակ, Հայաստանի անկախ Հանրապետութեան եւ անոր բարձրագոյն իշխանաւորներու ներկայութիւնը Մայր Տաճարէն ներս՝ երաշխիքն է որ Եկեղեցի եւ Պետութիւն նուիրուած են հայրենիքի նիւթական եւ բարոյական վերակառուցումին, նոյն նուիրուածութեամբ եւ զոհողութեան նոյն ոգիով:

Աւելի յուզիչ եւ իմաստալից էր յատկապէս, որ Հանրապետութեան նախագահի մօտ նստած էր վարչապետը, որ տակաւին քանի մը օրեր առաջ հողին յանձնած էր նահատակ իր եղբայրը: Քրիստոնեան կը հաւատայ անմահութեան եւ մահուան կը նայի միայն իբրեւ վերջակէտը երկրաւոր իր կեանքին: Նոյնն էր Ս. Խորանէն արձակուած պատգամը բոլոր ներկաներուն. Աստուած է մեր յոյսը եւ խաչն է մեր զօրութիւնը:

Ամեն մի հայու սրտի թարգմանը դառնալով՝ սա պահուն կը շնորհաւորեն Նորին Ս. Օծութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ կ'աղօթեն առ Աստուած երջանկայիշատակ Սիմէոն Կաթողիկոսի բառերով արձանագրուած Մայր Աթոռի առաջին տպարանին մէջ հրատարակուած առաջին գիրքին էջերուն սա տողերովը. «*Հիմայ, նախ կը յիշեցնենք քեզ, ո՛վ Տէր իմ Յիսուս Քրիստոս, քու կերտած եւ քու հաստատած Աթոռը՝ հաւատքի լոյս եւ հոգեւոր*

մեր ծնող Ս. Էջմիածինը, զոր քու իջնամբ հիմնարկեցիր, աստուածային լոյսով դեւաւորեցիր եւ ամենիմաստ ճարտարապետ՝ դու՛ հաստատեցիր:

Ս. Էջմիածին կ'ըսեն, զոր պայծառագոյն արեգակի նման ծագեցուցիր Այրարատեան դաշտին վրայ եւ լուսատու եւ պատուական ակի նման փայլեցուցիր Վաղարշապատ քաղաքին մէջ: Կազմեցիր զայն իբրեւ հայկազեան ազգին տրուած քու անսպառելի շնորհներուդ շտեմարանը եւ բխեցուցիր զայն թորգոմեան վիճակին մէջ իբրեւ քու հոգեպարար պարգեւներուդ աղբիւրը»:

Հաւատացեալ հայ ժողովուրդը կը միանայ Միածինին ուղղուած սրտաբուխ աղօթքին, հայցելու խաղաղութիւն՝ Հայոց հայրենիքին, պայծառութիւն՝ Մայր Աթոռին, սէր եւ միաբանութիւն՝ Հայոց Ազգին:

